МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«15» փետրվարի 2024թ.

«ԾԽՆԵԼՈՒԶԱԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ՀԱՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավագյան

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար «Հրակայուն-հականեխիչ նյութերով փայտե կառուցատարրերի տոգորման աշխատանքների» ձեռքբերման նպատակով 2023 թվականի սեպտեմբերի 12-ին հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-23/40» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչված «Ծխնելուզագործական սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Մասնակից) հետ 2023 թվականի հոկտեմբերի 13-ին կնքվել է «ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-23/40» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող Հավելված N 1-ով (տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց) աշխատանքների կատարման ժամկետ սահմանվել է 40 աշխատանքային օր՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, սակայն մինչ օրս աշխատանքները Ձեր կողմից կատարված չեն:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները (մասնավորապես 2.1.3 կետի «բ» պարբերությունը) տեղեկացնում եմ, որ Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ Մասնակիցը վճարում է Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա Պատվիրատուն Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված

որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին: Հակառակ դեպքում Մասնակցի նկատմամբ կիրառվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

Կատարող՝ գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ

Մելինե Սողոյան, հեռ. 060380040, 077198099